մը, որ աւելի գրական ձեռնարկութիւն է քան պարզ տարեցոյց։ Այսու արժ. հեղինակը կը ստեղծէ Ամերիկահայոց պատմութեան մէջ դարագլուխ կազմող նոր հոսանք մը, որ ինչպէս նշան մըն է կենդանութեան Ամերիկահայոց կողմանէ, նոյնպէս ալ գործնական արծարծիչ է Հայ ազգասիրութեան գաղափարին, անոնց սրտերուն մէջ։ Միանգամայն այս գործը պիտի ծառայէ պատմական ստոյգ եւ ճոխ աղբիւր այն ամէնուն, որ ապագային հարկաւորութիւն եւ առիթ պիտի ունենան Ամերիկահայ կեանքի վրայ գրելու։

Հմտալից յօդուածներ կը գրաւեն տարեցոյցի էջերը, ոչ միայն արժ. հեղինակի գրչէն, այլ նաեւ զանազան հայ ուսումնականներէ, զորոնք գիտցած է ինքն համախմբել իւր տարեցոյցին շուրջը։ 12—315 հոծ էջերու մէջ զետեղուած են Ամերիկահայոց ծագման, զարգացման եւ ներկային վրայ պատմական եւ քաղաքակրթական յօդուածներ, որոնց մէջ Ամերիկահայ կեանքը կը ներկայացուի գիտականօրէն, եւ կը պարզուին այն կեանքի ամէն երեւոյթներն եւ ծալքերը՝ հեռաւոր ազգայիններու աչաց առջեւ։

256—288 էջերը զարդարուած են արդի նշանաւոր Ամերիկահայերու եւ տարեցոյցիս յօդուածագիրներուն մաքուր լուսանկարներովն, որոնց կից են նաեւ համառօտ կենսագրական տեղեկութիւններ։ Ասոնց կը յաջորդէ գրական եւ բանաստեղծական բաժինը։

Բովանդակութեամբ եւ արտաքինով խնամեալ սոյն երկիս մէջ աչքի կը զարնեն ուղղագրական սխալներն, որոնց պատճառը, ինչպէս արժ. հեղինակը կը շեշտէ հոն, եղած է գործին ստիպողական փութացումն։

Թէ Ամերիկահայուն եւ թէ ոչ-Ամերիկահայուն հաւասարապէս արժանի գիրք է ընթերցման այս տարեցոյցը։

Բաղձալի է, որ յաջորդ տարին ալ նոյնպէս Ամերիկահայ կեանքի նուիրուած՝ պարունակէր տեղեկութիւններ ոչ այն տեսակեաներով, որ հոս արդէն շաղափուած են, այլ կենցաղի եւ վիճակագրական տեսակետներով, որոնք շատ սիրով եւ օգտիւ պիտի կարդացուին ամէն ազգասէր եւ ուսումնասէր Հայէ։

Հ. Ա. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս խորագրոյ տակ սկիզբ կ'ընենք գրական կարեւոր բաժնի մը, որուն համար շատ անգամներ քաղծանք յայտնուած է եւ սակայն միշտ առանց գործադրութեան մնացած։

Մատենագիտական այս բաժինը, յօրինուածական կերպարանաց ներքեւ նոր է հայ ընթերցողներու համար, բայց նոր չէ այն մեր եւրոպացի ընթերցողներուն, որոնք յաճախ անգամներ տեսած են զայն եւրոպական մատենագիտական թերթերու մէջ. ի մասնաւորի „Byzantinische Zeitschrift" Բիւզանդագիտութեան նուիրուած ուսումնաթերթին մէջ, լրելով ուրիշները (Révue l'Histoire écclesiastique եւն)։ "Հանդէս Ամսօրեայն„ իրրեւ Հայագիտական ուսումնաթերթ պէտք է եւ հարկ է ուշադրութիւն դարձնել գրական այս ամէնակարեւոր բաժնին։ Եթէ զայն մինչեւ այսօր չըրաւ կամ շատ քիչ ուշադրութիւն դարձուց (Ծաղկեփոնիջ, Գրատեան Նորոգիներ լուսանցագրութեանց ներքեւ), յանցանք մ'էր, որ այլ եւս չէր կրնար ներուիլ իրեն։ Հին յանցանքն ըստ մասին գոնէ քաւելու համար յանձին Մեծ. Հ. Պետրոս Փէլեհանեանի ձեռնարկուած է կազմել 1896—1910 տարիներու եւրոպական եւ հայկական հրատարակութեանց ցանկը, որուն տպագրութիւնն մաս առ մաս պիտի շարունակուի նաեւ այսուհետեւ։ Այն աւելի շոր ու ցաւաք ցանկ մ'էր, որ կը ծանօթացընէր միայն գրքերու խորագիրները։ Սկսեալ 1911էն այս լուսանցագրութեան

digitised by A.R.A.R.@

ներքեւ պիտի ջանայ խմբագրութիւնս յանձին Մեծ. Հ. Մեսրոպ Հաստոգեանի եւ այլ աշխատակցաց, տալ յօրինուածական ձեւի մէջ մատենագիտական ամբողջական տեսութիւն հայագիտական ամէն կարգի գրութեանց վրայ, որոնք լոյս տեսած են հայ թէ օտար թերթերու մէջ՝ հայ աշխարհի, ազգի, լեզուի, պատմութեան եւն մասին, ի հարկէ որչափ որ անոնք մատչելի կրնան ըլլալ խմբագրութեանս: Վիեննան շատ կողմանէ դիւրութիւններ կ'ընծայէ մեզի առ այս եւրոպական եւ հայկական հրատարակութեանց համար, բայց ոչ արեւելք լոյս տեսած՝ ռուսերէն, վրացերէն, տաճկերէն եւն լեզուաւ գրութեանց կամ յօդուածոց համար: Պիտի խնդրէինք գործոյն կատարելութեան համար ամէն հայ քանասէրի աջակցութիւնն առ այս: Խմբագրութիւնս պատրաստ է սիրով մէն մի ծանօթութեան (փոքր կամ՝ ընդարձակ) տակ նշանակել տեղեկատուին անունը, եթէ արդէն կանխաւ ծանօթ չըլլայ այն մեզի:

Գործոյն կարեւորութիւնը կը պահանջէ ամէն հայ քանասէրի համագործակցութիւնն առ այս:

Այսու աշխարհի որեւիցէ հեռաւոր անկիւն հաստատուած հայերէնագէտ կրնայ գաղափար կազմել հայ քանասիրութեան օր աւուր առած զարգացման մասին, կրնայ ծանօթութիւն ձեռք ձգել հայ կամ օտար թերթերու մէջ գրուած յօդուածոց եւ անոնց քովանդակութեան մասին, եւ ըստ այնմ՝ հայթայթել իրեն կարեւոր թուած յօդուածը կամ լրագրին թիւը. դարձեալ դիւրութիւն կ'ընծայուի որ եւ իցէ նիւթի վրայ կրկին կամ երեքպատիկ շգրելու կամ առանց նախորդներու կարծիքին ծանօթանալու՝ նոր յօդուածի չձեռնարկելու:

Ստորեւ մեր ներկայացուցածը առաջին փորձն է մեր գաղափարի իրագործման, ուր նկատի առնուած են միայն 1911ի հրատարակութիւնները: Մատենագիտական կատարեալ տեսութիւն մը տալու ժամանակը դեռ չէ հասած: Բայց յաջորդաբար պիտի զարգանայ, պիտի ուռճանայ, եւ յուսանք թէ օր մը ի վիճակի պիտի ըլլանք մրցելու եւրոպական հրատարակութեանց հետ՝ հայկական բաժնի կատարելութեամբ: Յօդուածներու կամ գրքերու քովանդակութիւնն առ այժմ համառօտիւ միայն բերուած է, եւ երբեմն ամենեւին իսկ, բայց յընթացս աւելի ընդարձակ, աւելի մանրամասնութեամբ պիտի խմբագրուի:

Մատենագիտական տեղեկութիւններս բաժնած ենք 8 բաժնի, առանց անդրադարձն ստորաբաժանման (թէեւ ջանացած ենք միշտ միտ դնել նիւթի զանազանութեան): Աւելի բաժանում չեն ներ առ այժմ հանգամանքները. հայագիտութիւնը դեռ չէ ժամանած այն զարգացման. եւ պէտք ենք խոստովանիլ միաժամանակ նաեւ որ յառաջ բերուած յօդուածներէն ոմանք եւ ոչ արժանի էին յիշատակութեան, այնպէս անուշադրուած են. այսպիսիներէն ինչ ինչ երբեմն բոլորովին իսկ ի բաց ձգեցինք, խորագիրներու գեղեցկութենէն չուզեցինք որ հրապուրուին մեր ընթերցողները:

Աչքի առջեւ ունէինք հայերէն ամէն կարգի թերթ. բաց ասկից արեւելեան գրականութեամբ զբաղող բազմաթիւ ուսումնասիրութիւններ: Հայերէն, ինչպէս նաեւ օտարալեզու օրաթերթերու կամ շաբա-

digitised by A.R.A.R.@

թաթերթնու մէջ գրուած հարեւանցի ակնարկները կարելոր չտեսանք հիւրընկալել մեր ցանկին մէջ, որոնց մասին ըստ բաւականի զաղափար կու տայ արդէն թերթիս ծածկոյթին վրայ դրուած "Քաղուածքը,,:

Ցընթացս մեր զործածած համառոտութիւնք դիւրաւ կրնան իմացուիլ: Գլխաւոր համառոտագրութիւնք են. ԱԳԴ. ՀՄԵԴ. = Ազգագրական Հանդէս. ԱՐԾ = Արարատ. ԲԶՄ = Բազմավէպ. Հանդ. Ամս. = Հանդէս Ամսօրեայ. Հ. Գրակ. = Հայ գրականութիւն. Ազատամարտ Շ. = Ազատամարտ շաբաթաթերթի. Anal. Boll. = Analecta Bollandiana. Byz. Zeitschr. = Byzantinische Zeitschrift. ZDMG = Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft. ROCH = Revue de l'Orient Chrétien. ՔՆ = Քննադատական:

"Հանդէս Ամսօրեայի,, բովանդակութիւնն աւելորդ համարեցանք յառաջ բերել, ենթադրելով, որ հայագիտութեամբ ամէն հետաքրքրուող արդէն իսկ ունի ի ձեռին "Հանդիսի,, թուերը:

ԽՄԲ. ՈՀԱՆԴԵՍԻ,,

1. Մատենագրական:

A. Meillet: Remarques sur le texte de l'historien arménien Agathange. Paris 1911. 8°, էջ 27. — Ուրատագ. Journal Asiatique, 1910, p. 457—481. — Մատենախօսութիւն Ագաթանգեղեայ նոր հրատարակութեան առթիւ, ուր կ'ընէ գեղեցիկ դիտողութիւններ՝ թէ 1. բնագիրն լաւ չէ վերակազմուած եւ թէ 2. Ցունարէնը հայ ձեռագրաց խմբին չի վերաբերիր, ինչպէս հրա. ըսած են, այլ անկախ է անկէ, եւ իր ընծայած ընթերցուածներով հնարաւորութիւն կու տայ շատ տեղերու մէջ ձեռագրաց ընթերցուածներն գնահատել եւ բնագիրը ճշդագոյնս վերականգնել: — Քն. Հ. Ն. "Արօր,, Բ. թ. 4, էջ 151:

Ն. Մառ՝ Մկրտութիւն Հայոց, վերաց. Աբխազաց եւ Ալանաց ի սրբոյն Գրիգորէ: Թարգմ. Ցուսիկ ազբեկ.: Վաղարշապատ. 8°, էջ Գ+139: — Մառ. 1902ին ի Սինա գտած եր Գրիգոր Լուսաւորչի գործունէութեան պատմութեան (= Ագաթանգեղոս) արարերէն խմբագրութիւն մը, զոր 190. ին հրատարակած էր Հանդերձ ռուսերէն թարգմանութեամբ եւ քննութեամբ: Այժմ հայերէն կը թարգմանուի այն: — Քն. Սա. Կանայեանց՝ ԱՐԾ. Խլ. 411—415. Հր. Աճառեան ՈՍՏԱՆ. Ա. 941—42:

Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, հրա. Կ. Կոստանեանց: Ամիրգանդրապատ. Սանդիեանց 1910, 8°, — Քն. Հ. Ն. Անդրիկեան, ԲԶՄ. կԹ., 45—48: Հմմտ. եւ Հանդ. Ամս. 1910, 125—127:

Եղիշէ՝ Վարդանանց պատմութիւն. Թարգմանեց Գիւտ ա. ք. Ալանեանց, Տփղիս, տպ. Օր. Ն. Ազանեան, 1911, 8°, էջ 270, Գինն՝ 75 կ.: — Աշխարհաբար թարգմանութիւնս (առաջին բարբառով) ճոխացուած է ինչ ինչ ծանոթութիւններով՝ լեզուական մեկնութիւնք պարզելու նպատակաւ:

Աշխարհաբար Եղիշէի Վարդանանց պատմութիւնը: թարգմ. Յ. Վարժ. Կ. Պոլիս տպ. Մ. Յ. Գոչունեան 1911, 8°, էջ 204: Գինն՝ 7 ղրշ.:

Հ. Ղ. Տայեան՝ Եղիշէի չորս յեղանակները հնագոյն դէպքերի մէջ: Վենետիկ. 8°, էջ 242: Գինն՝ 2 ֆր.: — Մանրակրկիտ հաստատութիւն մ'է Եղիշէի 1224ին գրուած ձեռագրի մը եւ 1823ի տպագրութեան: Նախնեաց լոյս տեսած "Բազմավէպ,, մէջ:

Երանելւոյն Մխայելի Հայոց եպիսկոպոսի Մեծի կոչմանցն եւ Քրոնիկոնէպոյ նահանգին ի սուրբ խաչն Քրիստոսի. ԲԶՄ. կԹ., 258—265: — Հ. Ն. Անդրիկեան կը հրատարակէ Վենետիկի Մխիթ. Մատենադարանի ձեռագրէ մը "Ի Ս. խաչն Քրիստոսի,, ճառը: Քննութիւն մը այս մասին տես ԲԶՄ. 1906, էջ 160—166:

Գէորգ-Մեսրոպ՝ Մովսէս Խորենացի. "Հ. Գրականութիւն,, թ. 6, էջ 27—31: — Ամփոփ տեսութիւն մը Մ. Խորենացւոյ անձնաւորութեան եւ գրութեանց մասին՝ վերջին քննութեանց հիման վրայ:

Սիսուն Վրդ.՝ Մովսէս Խորենացի թէ Խորին: ԱՐԾ. ԽԵ., 232—238: — Կ'առաջարկուի "Խորենացին,, կարդալ "Խորին,, Երբին, նման Դաւթի "Անյաղթ,, յորջորջման եւ ոչ "Խորենք-ցի,,. Մովսէս Արարատեան էր եւ ոչ Տարօնէն:

Հ. Կ. Տէր Սահակեան՝ "Սաթենկայ երգ,,ի բառականն եւ քննական խմբագրութիւն: ԲԶՄ. կԹ., էջ 345—352: — Աւելի Շատ Վ. Սահակեանի յաջորդին (Հանդ. Ամս. 1911, էջ 334—347) կը փաթեթ Ց. Ս. երգին խճճուած տալ բառական մեկնութիւնքս: Ամբողջ ձգտումը շատ անպէտ կը թուի:

Յովհաննու վրդ.ի Գասնեցւոյ Ազբերամատոյց: Վենետիկ, 12°, էջ 99: — 1665ին գրուած ձեռագրի մը վրայէն Հ. Ե. Ա. կը հրատարակէ յանուն Յովհ. Գասնեցւոյ ձեռագրաց մէջ գտնուած

digitised by A.R.A.R.@

աղսթքներէն 23 կտոր, 21ին սկզբնատառերն կը կազմեն "Յովհաննէս Գառնեցի ասացաւ"։ Ի նկատի առնուած են նաեւ ուրիշ 9 ձեռագիրներ, սակայն առանց տարբերութիւնները նշանակելու։

Հ. Ն. Ակինեան՝ Սանդուխտ. ԲՕՄ. կԹ. 289—292, 369—374. — "Այս նոր քննութեան նպատակը պիտի ըլլայ (Սանդխտոյ վկայաբանութեան) զուտ ազգային պատմական մասը գատել, յետագայ քրիստոնէական եկեղեցական յաւելուածու եկամուտ տարբերէն եւ անոր լուսաբանութիւնը տալ"։

Սեբէոսնոս Օրբէլեանի պատմութիւն Նահանգին Սիսական. Տիգրս. տպ. Ն. Ագանեանց. 8°, էջ 618։ (Ղուկասեան Պատենագարան Դ.) Ընդարձակ հրատարակութիւն Կ. Վ. Շահնազարեանցի 1859 տպագրութեան (առանց ծանօթութեանց)։ Կից ունի Յառաջաբան մը։

Հ. Ն. Ակինեան. Խաչատուր Դաւրիժեցի։ ԲՕՄ. կԹ. 481—489։ — Christoforo Armeno-ի 1557ին գրած Peregrinaggio di tre Giovani filinoli del re Serendippo (հրատ. Վենետ. 1557 եւն) գրքին վրայ տեղեկութիւն։

Հր. Ա՛ճառեան՝ Մի քանի օրագրութիւններ Փաւստոսի եւ Փարպեցու մէջ։ Նորագիւտ բառեր Սեբէոսի մէջ։ ԱՐՄՏ. խԵ. 225—231։ — Ինը օրագրութիւն բնագրի եւ հինգ նորագիւտ բառեր։ 1. Փաւստ. Գ. 12. կարդալ՝ բայց գուսարեաց ընդ նմա... զմեծ հաղարապետն ի հաղարապետութենէն իսկ ի տունմ՝ անենայն Հայոց մեծաց, զՎաղարշ. որ էր իշխան Ամատունեաց։ եւ...։ 2. Ագդ. "Առամ իշխ. Գողմանայ" կարդալ՝ Ատաս։ — 3. Փարպ. 167—8 "որ մեր խաթոյ հայկատաւկայ ջուկն էր" կարդալ՝ խաթոյ։ — 4. Պատէլ Փարպ. լգ. "գունդն Վահեւունեայց համաձայն մեռագրաց՝ փախ. "Գիւտն Վահեւունեայց"։ — 5. Փարպ. խ. "Ամրոսիմզդ մարզպան էր յաշխարհն Հայոց" այս է "Հայաստան գանուզ պարսիկ բանակեն կամ Հայաստան բնակաղ"։ — 6. Զանգակ երեց յատուկ անուն։ — 7. "Ամրեն Գաբրիելեան" եւ զ "Ամին"։ — 8. Փարպ. խԲ. մեռագրին "գինդաղ" կարդալ՝ "եւ Դաղ" եւ ոչ "եւ Գատ"։ — 9. Փարպ. 202. "Զհրեշականմանն այրն զՏեր՝ նոյն անհնգիտա հայաձանաք վախճանեցուցին" կարդալ "զայրն զՏեր՝ նոյն՝ անհնգիտա..։ — Սեբէոսի մէջ կը գտնէ 5 նոր բառ. 1. Հաղոյր = պայուսակ։ — 2. Հաւայ = քաղաքարծուութիւն, յայթութիւն։ — 3. Վերուանմուտ = կարդալ՝ վերդ եւ ամուտ։ — 4. Սրեան = մանգաղ։ — 5. յանկումուշի = յանկումուզ ի ինչ? քան Ճեռագրին։

P. Garabed Der Sahaghian: Un document arménien de la généalogie de Basile I., Byz. Zeitschrift, 20, S. 165—176. — Կը ցուցնէ թէ Ս. Սահակեան Տեսին առ Վ. Փարպեցւոյ Վասիլ Ա.ի օրով գրուած է՝ Փսամ մեռքէն։

K. J. Basmadjian: Histoire du Père Élie de Kharpout. ROCH. 1911, էջ 55—67. Հայ. բնագիրն "Պատմութիւն Տէր Եղիայ քահանայի խարբերդցւոյ գրուածեան, զոր 1908ին հրատարակած էր Նաւս. Հ. Ա՛ճառեան ԱՐՄՏ, էջ 812 եւն։ Բասմաջիան հայ բնագրին գաղղերէնէն թարգմանու թիւնն տուած էր անդ. 1910, էջ 337—349։

Ղ. Վ. Յովհաննեան՝ Մի՛ջնադարեան ազգային ասաղաչափութիւն ուսմախառն եւ Հ. Ն. Ակինեան՝ Յովհաննէս Դաղաղ եւ Դաղաղ Յովհաննեանց եւ իրենց քանասեղծական եւ նկարչական աշխատութիւնք։ Վիեննա 1911, 8°, էջ 117։ — Առաջին մասին մէջ կը հրատարակուի † Հ. Յովհաննեանի մի քննութիւնը միջնադարեան հայերէն տաղասացներու վրայ, որ նախնաբար լոյս տեսած էր Հանդ. Ամս. մէջ (1895—1896)։ — Բ. մասին մէջ Հ. Ակինեան կ'ուսումնասիրէ Յովհան Դաղաղի կեանքը, անձնաւորութիւնը, տարերք. անոր Ցակոբ եւ Ցարութիւն որդւոց եւ Յովհաննէս Թոնաւ կեանքը եւ գործունէութիւնը գրական եւ սկարչական տպագրեցներու մէջ։ Դախնաբար լոյս տեսած էր Հանդ. Ամս. մէջ (1911)։

Հ. Մ. Պասուրեան՝ Յովհաննէս Դաղաղ Շօռոթեցի։ ԲՕՄ. կԹ. 173—174։ — Պատենաթասութիւն առթիւ Զօպանեանի հրատարակութեան։

Պագրէ Տեր՝ Յովհաննէս Դաղաղ. ԲՕՄ. կԹ. 476—478 եւ 480. — Լեզուական դիտողութիւններ։

Պագրէ Տեր՝ Նահապետ Քուչակի գիւաներ։ ԲՕՄ. կԹ. 230—233. — Զօպանեանի հրատարակութեան վրայ լեզուական դիտողութիւններ։

Կ. Ց. Բասմաջեան՝ Թադաւորօրհնէք Հայոց. ԿՈՍՏԱՆ. ԺԲ. (1912) էջ 22—23։ — Անդրադարձութիւն Խ. Լեւոնեանի՝ Հայ թագաւորներու օծման արարողութիւնը, յօդուածին (Կաչնակ, ԺԱ. Թ. 39—41)։ Կը գտնէ որ Լեւոնեանի հրատարակած բնագիրը թարգմանութիւն մ'է լատինէնէն։

Preuschen E.: Eine altkirchliche antimarcionistische Schrift unter dem Namen Ephräms. Ի թերթին Z. f. d. neutestamentliche Wissenschaft, 12 (1911). 243—269. — Եփրեմի "Թարգմանութիւն Ա.ենասարանի" (տպ. ի Պատենագրութիւնս Եփրեմի. Բ Վիեննա. 1836, էջ 261—345), որ ասոնցէնէ թարգմանուած է, իր կարգին յունարէնէն կը բղխի։ Յունարէնը Բ. դարու վերջերէն է, զոր P. կը փնտրի նոյնացնել Թէոփիլոս Անտիոքացւոյ ընդդէմ Մարկիոնի գրուածքին հետ։

P. Petrus Ferhat: Der Jobprolog des Julianos von Halikarnassos, in einer armenischen Bearbeitung. Ի թերթին Oriens Christianus, N. S., I. Band, Heft 1. էջ 26—31. — Հայ բնագրով եւ լատին թարգմանութեամբ կը հրատարակուի Վիեննայի Մխիթ. Պատենագարանի ձեռագիրներէն "Յուլիանեայ եպիսկոպոսի Ազեքսանդրացւոյ Նախադրութիւն Յոբայ Գրոցդ" (էջ 28—31)։ Յառաջաբանին մէջ կը ցուցնէ F. թէ նոյն նաեւ յունարէն հասած է "Որոգինի" անուամբ, որ անպատճառ Յուլիանեայ ըլլալու է։

Հ. Ց. Թորոսեան՝ Ալիթալաչի հովսեական կամ վարդապետական մատեան։ ԲՕՄ. կԹ. 559—567։

digitised by A.R.A.R.@

— Վենետ. Մխիթ. Մատենադարանի թ. 822 ձեռագրին մէջ, եվ յԺ.-յիս կայ գրուածք մը՝ «Ճառ Ամենայնի Աստուծոյ Եպիսկոպոսի»։ Հ. թ. կը ծանօթացնէ և ճառս հեղինակը, որ ներկայ գտնուած է Նիկիոյ 325ի ժողովին, եւ ճառը՝ որ իբրեւ թուղթ գրուած կը համարուի Պարսից քրիստոնէից։ Ճառը թարգմանուած է Ղ. դարուն՝ այն դարուն սեպհական լեզուով՝ հաւանականաբար Եզնիկի գրչէն։ Ցոյց կը տարուի նշանաւոր թեններ ճառս եւ Եղնիկի ընդդէմ Աղանդոց գրքին մէջ։ Բայցեալ եր որ ամիսզուրեամբ հրատարակուէր կարեւոր ճառս։

Die Chronik des Eusebius aus dem Armenischen übersetzt von Dr. Josef Karst, Leipzig, J. C. Hinrichsche Buchhandlung, 1911, 8°, S. LVI—320. Գինն՝ M. 16.— Գերմ. թարգմանութիւն Իսաբերեայ Քրոնիկոնի։ Պիտի մատենախօսուի։

Գրէգորիոս Պարսաւ՝ — Յայտնութեանն Յովհաննու հին հայ թարգմանութիւն. զատագիրն ած ի լոյս ըստ երկուց ձեռագրաց, համեմատութեամբ յունական բնագրին եւ թարգմանութեան Ղերսիսի Լամբրոնացւոյ հանդերձ ներածութեամբ եւ ծանօթութեամբք։ Ա. Պատն՝ Ներածութիւն. եւ՝ Բն լուսաբանք տախտակաց հանդերձ. Երուսաղէմ 1911, 8°, էջ ՃԻԵ. Գին՝ Ա. մասն 12 Ֆր. Ա. Բ. Գ. մաս 20 Ֆր.։ — Մեծաչափ մասերն լոյս տեսած են արդէն 1905. 1906։ Պիտի մատենախօսուի։

Հ. Յ. Ալգիսեան՝ Յունարէն թէ լատիներէն։ ԲԶՍՐ. կԹ. 276—279. — Ընդդէմ Հ. Ն. Ակինեանի հաստատութեան (Հանդ. Ամս., 1911, էջ 305—310) թէ իրենեսի «Յոյցքոր եւ Ընդդէմ Հերձուածոց գրութիւնը յունարէնէ թարգմանուած է՝ գարձեալ կը փորձէ Հ. Ալգ. լատիներէն թարգմանութիւնը բնագիր ապացուցանել։ — Հմմտ. եւ W. Lüdtke: Der armenische Ireaeus է, Theol. Literaturzeitung, 1911, Nr. 17, S. 541, ուր L. կարծեկիցն է Հ. Ակինեանի։

Le synaxaire arménien de Ter Israel, publié et traduit par le Dr. G. Bayan avec le concours de S. A. R. le prince Max de Saxe. Ի հաւաքման Patrologia orientalis, Paris, 1910—1911, t. V., page 345—556, t. VI., p. 173—356. — Տէր Իսրայէլի Յայսմաւուրքին հրատարակութիւնը պարսի Ազգ. Մատենադարանի Ձեռագրաց համեմատ եւ գաղղիերէն թարգմանութեամբ։ Ցայժմ հրատարակուած է միայն Նաւասարդ եւ Հոռի ամիսները։

P. Peeters: Pour l'histoire du synaxaire arménien. Anal. Boll. 1911, p. 1—26. — Ակնարկ մը հայ Յայսմաւուրքի ծագման վրայ՝ մասնաւորապէս Տէր Իսրայէլի Յայսմաւուրքին։ Յոգաւածիս շարժառիթեղած է Պայեանի հրատարակութիւնը (տես վերը.) զոր շատ անքաւական կը գտնէ։

— — La Passion Arménienne de S. Phocas. Anal. Boll. 1911, p. 290—295. — Իբրեւ Գ. գլուխ C. Van de Vorst է St. Phocas ուսումնասիրութեան (անդ, p. 252—239), տուած է P. հատատ ներածութեամբ մը Սբբոյն հայերէն վկայաբանութեան (Հրտ. Վարք եւ վկայաբ. Սրբոց. Բ. էջ 485—90) լատիներէն թարգմանութիւնը։ Հայերէնը ծագած կ'երեւայ ասորերէն խմբագրութենէ մը։

— — La passion arménienne de S. Thomas. Anal. Boll. 1911, էջ 290—295.

Beneševič V. N.: Армяс:й прологъ о свв. Борисѣ и Гѣбѣ (Հայերէն գրուածք մը Բորիս եւ Գէոր սուրբերուս վրայ)։ Սրատոգ. Извѣстія Отдѣленія русс. языка и словесности Имп. Акад. Наук. Հատ. XIV, 1909, էջ 201 + 36. — Քն. P. Peeters: Anal. Boll. 1911, 374—376։

A. Ханановъ — Матеріалы по гр.-узинской агіологіи по рукописямъ X вѣка. Москва 1910. 8°, XXVII + 80. (Труды по востоковѣдѣнію, кн. XXXI. — Նիւթեր վրական սրբախօսութեան համար քան զ գրաբար ձեռագրի)։ Հաս հրատարակուած են Հայերէնէ վրացերէն թարգմանուած բազմաթիւ վկայաբանութիւններ։ Քն. P. Peeters: Anal. Boll. 1911, էջ 455—458։

Gebhardt O. v.: Die Akten der edessenischen Bekenner Gurjas, Samonas und Abibas. Leipzig, Hinrichs, 1911, 8°, էջ LXVIII., 264. 12 M. (Texte und Untersuchungen). Նկատի առնուած է նաեւ հայերէն թարգմանութիւնը։ Հմմտ. առ այս. W. Lüdtke, Քն. ի թերթին, Berliner philologische Wochenschrift, XXXI. (1911), թիւ 51. էջ 1591—1598։

Հ. Հ. Համբարեան՝ Որոնք էին Ե. դարու թարգմանիչները։ ՇՄԳ. Ա. թ. 6։

Մ. Վրդ. Մաքսուդեան՝ Նկարագրութիւն եւ Յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանուց եւ եկեղեցեաց վերին Ագուլեաց. եկեղեցոյն Ցանկերա գեղջ եւ անձանց մասնաւորաց. ԱՐՄՏ. Խե. էջ 117—127, 218—224, 314—319, 384—389, 460—466, 562—568, 759 766, 846—854 (Շարունակելի)։

Տրդ. Եպս. Պալեան՝ Հայ աշուղներ, ժողովրդական հայ երգիչներ եւ տաղասացք. Հար. Ա. Իզմիր. տպ. Մամուրեան, 1911, 8°, էջ 288, Գին 10 ղրշ. Քն. Հ. Ն. Ակինեան, ՀԱՆԴ. ԱՄՍ. 1911, 760—763։

Փափազեան Վ.՝ Պատմութեան Հայոց գրականութեան մինչեւ մեր օրերը. Բանահիւսութեան պատմութիւն. Բանաւոր գրականութիւն. Հին, միջին եւ նոր դարեր. Ղարագոյն շրջան Իսլամայ եւ թուրքայոյ գրականութեան։ Բաւելուած՝ նմոյշներ հին եւ միջնադարեան գրականութիւնից. Տփղիս. Ն. Աղանեանց, 1911, 8°, էջ Թ + 817 + XII + 160։

Սրբմրբեան Յ. Գ.՝ Պատմութիւն հայ գրականութեան ի պէտս բանասիրաց, մանաւանդ բարձրագոյն ուսանողաց. Հար. Ա. Պատն Ա. քննչեւ Երզն սպիգարը, կ. պ. 8°, էջ 144, Գին՝ 7 ղրշ.

digitised by A.R.A.R.@

Հ. Ղ. Ա ն դ ր ի կ ե ա ն՝ Ուրուագիծ հայ մատենագրութեան. Բ.ՋՄ. կթ., 301—306, 337—345, 387—401, 433—443։

Գ. Ն ե լ՝ Ծ. Վ. Գ ա լ է մ ք ե ա ր ե ա ն՝ Սիւնեաց Դպրոցը։ Տաճար, 1911, թ. 12—3, 35—36, 39, 41, 43, 46, 48 (առ թ. 48 Դիտողութեան մէջ ՀԵՌՄԻԽԵ թ. 51—52)։ — Համառօտ ամփոփում ի—Ի դարերու Սիւնեաց դպրոցի գրական արտադրութեանց եւ նշանաւոր անձնաւորութեանց մասին։

A. Baumstark: Das Schrifttum der Armenier und Georgier. Ի դեր. Die christl. Lit. des Orients. (անմատչելի)։

→ ← Literaturbericht. Ի թերթին Oriens Christianus, N. S., I. Band, 1911, H. 1, 163—189. Հ. Պ. Փ է ր հ ա թ ե ա ն ի տեղեկատուութեամբ B. 1910—1911ի հայ մատենագիտութիւնն հոս կը հիւսէ ընդհանուր գրականութեան հետ։

G. H. Paschayan-Khan: La littérature arménienne concernant l'hygiène scolaire pendant les années 1909 et 1910. Ի թերթին Internationales Archiv für Schulhygiene (1911). Ի երկին տարիներս լոյս տեսած գրոցական — առողջապահական գրութեանց ամփոփում մը։

J. Karst: Մատենախօսութիւն 1. A. Manandian: (Nonos.) Die Scholien zu fünf Reden Gregor v. Naziahz, Marburg 1903; 2. F. N. Fink und L. Gjandschezian: Verzeichnis der armen. Handschriften der K. Universitätsbibliothek zu Tübingen, 1907; 3. F. N. Fink: Katalog der armen. Handschriften des Herrn Abgar Hovanissianz, Leipzig, 1903, գրութեանց վրայ ի թերթին Oriens Christ, I., 1911, S. 142—144.

2. Լեզուաբանական։

A. Meillet: Recherches sur la syntaxe comparée de l'arménien: Mémoires de la S. Linguistique t. XVII, Paris. ՀԷ. Բ.ՋՄ. կթ., էջ 287—288։

Հ բ. Ա ն ա ռ ե ա ն՝ Հայ լեզուաբանութեան անցեալն ու ներկան. "Ասատ„ Ա. թ. 1, էջ 37—43։ — Ընդհանուր տեսութիւն հայ լեզուաբանութեամբ զբաղողներու վրայ։

Almo Zanolli: Studio sul raddoppiamento, allitterazione e ripetizione nell'armeno antico. Firenze, 8°, էջ 98. — Արտոգ. Giornale della Società Asiatica Italiana, XXIV (1911).

H. Մարր: Грамматика чанскаго (лазскаго) языка. С. П. 1910, էջ XXX. + 240. Գիրք՝ 2 բա։ — ՀԷ. Հ բ. Ա ն ա ռ ե ա ն. ԱՐՐՏ. Խե. 414—420. բնագրագիրքին ծանրանալով լեզուներին եւ լեզուներնոյներին մէջ հայերենէ փոխառեալ բառերու վրայ։

— — Яфетическіе элементы въ языкахъ Арменіи. I. Ի հաւաքման Mémoires de l'Académie des Sciences de St. Pétersbourg, 1911, էջ 137—145 = «Ցարեւելեան տարրեր հայերէնի մէջ». Ա.ո Ընդարձակ գրքէն մասնաւոր. Հանդ. Ամս. 1911, էջ 753։

— — Сирійское происхожденіе հայկաց դամբարան dambaran [оссуарій]; гогила; склеп. Ի. Отдѣльный изъ Записокъ Восточнаго Отдѣленія Имп. Русс. Археол. Общества XX. (1911), էջ 64—66. "Հայերէն գամբարան բառին ասորական ծագում մը„, տես այս մասին Հանդ. Ամս. 1911, էջ 752։

— — Богъ Саваѳіосъ у Армянъ (= Արաքիա աստուածը Հայոց քով) С. Петерб. 1911. — ՀԷ. Ցուցակ տրքեզ. ԱՐՐՏ, 794—799. ուր ընդարձակ լաւագրքութիւններով կը ներկայացուի Ն. Մառի տեսութիւնը. "Արաքիսոյ զանազան ձայնական փոփոխութիւններէ եռաբ՝ հայերէնի մէջ մնացած է՝ "Աստուած„ ձեւի տակ։ Ուշմանն հայ գաւառաբարբառներու մէջ կը տեսնէ Մ. գեռ հին ձեւերէն մնացորդներ։

Հ բ. Ա ճ ա ռ ե ա ն՝ Հայ բարբառագիտութիւն. Ի Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների, բարբառագիտական քարտէսով. (Ի մինեան ազգագրական ժողովածու Հատոր Ա.) Մոսկու ա—Դասխիջեւան 1911, 8°, էջ XII + 305։ Դասնաբար գաղղիերէն (1909, Paris) հրատարակուած՝ (Classification des dialectes arméniens) գրութեան ընդարձակուած հայ խիստագրութիւնն է, որ կը գրաւի հայերէն բարբառներու դասաւորութեամբ. հայերէնս ճոխացուած է բազմաթիւ նմոյշներով ի բաբանչիւր բարբառէն։ Գաղղիերէնի վրայ ՀԷ. J. Karst: Indogerm. Forsch. 26, Anzeiger, էջ 12—13; Համա. եւ Հանդ. Ամս. 1909, թ. 10։

Հ բ. Ա ճ ա ռ ե ա ն՝ Հայկականք. 1. Մի կորած ազգ. 2. Հեղհաղարութիւն. 3. Ցներ. 4. Սոխուած. 5. Ալդողք։ ԱՐՐՏ. ԽԵ. 670—673։

Խաչիկ Ց. Սարգսեան՝ Բացատրութիւն մը "գաղտաբարք„ մասին. ՏԱՃԱՐ. Բ. 637. — Գաղտաբարք չի նշանակեր Սեռ այլի, ինչպէս գտնել Վ. Գալէմքեարեան կը կարծէ (Տաճար, թ. 32), այլ "Համատարած այգեստան„, եթէ չէզաթայի բարբառի մէջ կը նշանակէ սեռ... փոխարերբար՝ ահեղ, սոսկալու, դամատարած։

Հ. Ա. Տիրոյեան՝ Հոմանիշ բառեր. Բ.ՋՄ. կթ. էջ 114—128։

Ա. Զօպանեան՝ Արեւելեան եւ արեւմտեան աշխարհաբարներու խնդիրը. Անահտ. ԺԲ. 92—96։

Խաչիկ Ց. Սարգսեան՝ Հայ լեզուն. ՏԱՃԱՐ. 414—417։

Ց ու շ ա ր ա՝ Հայ լեզուի ուղղագրութիւնը. ԱՐՐՏ. ԽԵ. 674—675։

Ս ա հ ա կ թ ա ն ղ ե ա ն՝ Հայերէն լեզուի խանգարմունք. ԱՐՐՏ. ԽԵ. 860—862։ — Հայերէն ուղղագրութեան խնդրոյ մասին։

Ց ա վ հ. Գ ա ղ ա ն ճ ե ա ն՝ Լեզուական հարցին շուրջը. Ազատամարտ Շ.։ 1911, թ. 64—65։

Կ. Ց. Բ ա ս մ ա ջ ե ա ն, Բ ա բ գ է ն ե պ ս., Ց. Ց ա ր ա թ ի, Ն ե ն ա ն, Գ. Ա գ ի կ Օ ղ ա ն ե ա ն, Ց.

digitised by A.R.A.R.@

Շահրիկեան, Մ. Վարանդեան, Գ. Վարուժան, Յակոբ Բիւրեճեան, Ղ. Ազայեան, Ա. Զօպանեան, Շիրվանզադէ, Վրթ. Փափազեան՝ Հայ Գրական լեզուի խնդիրը. Աղտամարտ Շ. թ. 40—50։

Սա. Լիսիցեան՝ Պոլսահայերէնի ներկան եւ ապագան Լաստամարտ Շ. 51—52։

Տ. Զիթաճեան, Կարպ՝ Զարեհ, Շ. Ա. Վարամ՝ Հայ լեզուի խնդիրը. Ազմտ. Շ. թ. 55—57։

3. Պատմական։

Գ. Հորդ-Մեսրոպ՝ Ուրարտու կամ Հայաստանի բնիկները եւ իրենց քաղաքակրթութիւնը։ Գ. Պ. տպ. Ամրդ. 1911, 8°, էջ Ը + 216, 28 պատկերով եւ քարտով մը. Գ.ին՝ 10 զրշ.։ (Հմմտ. վերը՝ էջ 76։

Սա. Լիսիցեան՝ Հայերուն ծագումը եւ քաղաքակրթութիւնը. Աղտամարտ Շ. թ. 24—25։

Գ. Հորդ-Մեսրոպ՝ Հայերու ծագումը. ՇԱՆԹ. 1911, թ. 3, էջ 38—41։ — Ուրիական հայերը Հայաստանի բնիկներն չեն, այլ արեւմտեան գաղթականներ, որոնք փուլ-գաղութ հիմ Ասիա անցած են եւ իրենց քաղաքակրթութիւնն եւ կրօնքը կրցած են ոտիրոց ըլլալ երկրին։

Հ. Ց. Ուզերեան՝ Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան. ԹՕՄ. կթ. 99—106 (Շարունակելի)։

Հ. Յ. Ասատուրեան՝ Քաղաքային վերաբերութիւններ բնդ մէջ Հայաստանի եւ Հռոմայ. 190, Ն. Ք. մինչեւ 428 յ. Ք։ ԹՕՄ. կթ. 254—462, 494—509։ — Թարգմանութիւն հեղինակին Դոկտորատուրեան պատնէշը. քննութիւն, որ է.

P. P. Asdourian: Die politischen Beziehungen zwischen Armenien und Rom von 190 v. Chr. bis 428 n. Chr. Venedig, 1911 (անմատչելի)։

Սիոն վրդ.՝ Նշմարներ նախին հայ քաղաքակրթութեան բան խորհրդոյ Մովսէսի. ԱՐՊՏ. Խե, 466—472։

Հ. Կ. Տ. Սահակեան՝ Հայ ցեղը եւ դասական դիւցազներգութիւնը։ ԹՕՄ. կթ. 328—333։

Հ. Ն. Ակինեան՝ Կիւրիոն կաթողիկոս վրաց. Պատմութիւն Հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ. Վիեննա 1910, էջ ԻԸ + 315։ Քն. P. Peeters, Anal. Boll. 1911, 106—109.

Н. Адонцъ. Армянія въ эпоху Юстиніана. Политическое состояніе на основѣ нахараркаго строя. С. П. 1908, 8°, էջ XIV + 526 (Текстъ и разысканія по армяно-грузинской филологіи. кн. XI.) Քն. P. Peeters, Anal. Boll. 1911, 105—106.

Կ. Գիւտերբոգ՝ Բիւզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց դիւանագիտական եւ ազգային-իրաւական յարաբերութիւնները Յուստինիանոս ժամանակ։ Գերմաներէնէ թարգմ. Հ. Հ. Հասրաբեան։ Վիեննա 1911, 8°, էջ Ը—162։

E. Merten: Zum Perserkriege der byzantinischen Kaiser Justinos II. und Tiberios II. (Programm), Weimar 1911 (անմատչելի)։

Հ. Կ. Տեր-Սահակեան՝ Հայերը բիւզանդական մատենագրութեան մէջ։ Արշակունի գերդաստանը։ ԹՕՄ. կթ. 16—23։ Յօդուածիս նիւթը կը կազմեն Արշակունի հայ կայսերը, Վասիլ Ա., Լիւոն Զ. Խմնատնատեր, Կոստանդին Զ. Պորփիւռածէն։ Վերջոյս De administrando imperio գրուածքէն կը թարգմանուի "Տարօն գաւառի մասին" հատուածը։

Н. Адонцъ: О происхожденіи Арменъ-Цатовъ. Ի թերթին Журналъ министерства народнаго просвѣщенія, 1911, էջ 238—249։ — Կ'ուսումնասիրէ նորագոյն վարդապետներու հիման վրայ Հայ Ցատերու ծագումը։ Ուրիշ առիթ ընդարձակօրէն պիտի խօսուի այս մասին։

Հ. Կ. Տեր Սահակեան՝ Վարդ Հայկազն. Համայնարանի գաղափարը Հայ-բիւզանդացի իշխանի մը քով, հելլենական գիտութեան պաշտօնէ մը անկման շրջանին. Վարդ Հայկազնի նկարագիրը, վարքը։ ԹՕՄ. կթ. 375—380։

Կ. Ց. Բասմաճեան՝ Ամիրներուն թեւ Ատրներուն։ "Լոր Այդ" թ. 3. էջ 54։ — Ատրական ծագումը բան մը ինչպիսի է Ամիրներուն, զոր Ղ. Փարպեցի կը յիշէ իբրեւ Վասակ Սիւնեաց զօրիներէն մին, չի կրնար Լ. դարէն յառաջ Հայաստան մուտք ըլլալ. պէտք է զայն կարդալ Ատրներուն։

Dr. Georg Altunian: Die Mongolen und ihre Eroberungen in kaukasischen und kleinasiatischen Ländern im XIII. Jahrh. (Historische Studien, H., XCI), Berlin, Emil Ebering, 1911. 8°, էջ 115. — Մոլլին գարու հայ պատմութեան համար չատ կարեւոր քննական գործ կը խօսի նոր զանազան խաներու տակ Մոնգոլաց ազնարհակալութեանց վրայ, եւ երկրորդ կը չնչոյ դիմանը այն լուսով, որով անոնք երեսցուած են Հայ պատմագիրներու, անոնց յայտնեալ իր սովորութիւններն, բարքն ու կենցաղը, կրօնական գաղափարներն, պատերազմական արուեստը։ Գործս գլխաւորապէս հիմնուած է հայ աղբիւրներու վրայ։

Սա. Լիսիցեան՝ Արաբական ազդեցութիւնը Հայաստանի մէջ։ Աղտամարտ Շ. թ. 46։

N. Jorga: Geschichte des osmanischen Reiches. (Allgem. Staatsgesch., hgb. v. Lamprecht. I., Abt. 37.) Bd. IV, Gotha, Perthes, 1911, XVIII, 512 p.

Ա. Սարուխան՝ Օսմանեան Հայերի ազգային սահմանադրութիւնը 1860—1910։ "Լրոյ" (Շարունակութիւն նախորդ Ա. 1910, թիւ 1—12 տարիէն), Բ. տարի թիւ 1—11։ — Ընդարձակ սեռութիւն մը Ազգ. Սահմ. եւ պարագայից։

Հ. Գր. Սարգիսեան՝ Դիտողութիւնք դիտողութեանց "Գիր կամ պաշտպանակ հնախօսականին" առիթով։ ԹՕՄ. կթ. 53—62։ — Մի քէք թա-

digitised by A.R.A.R.@

գուհ.ոյն Աւետարանի գրութեան թուականի, յատկապէս Ցիշատակարանին մէջ տեղեկացած Ցգրի իմաստի մասին, ընդդէմ Հ. Վ. Հացունեաց, որ զայն «պահպանակ» մը կը համարի։ Այս յօդուածին պատասխանեց երկրորդ անգամ՝

Հ. Վ. Հացունի՝ Մտքի Աւետարանին Ց տարբ մեկնագիր կը մեայ. Թ.Զ.Մ. կթ. 128–137։

Եղիշէ ա. ք. Գ ե ղ ա մ ա ն՝ Պատմական քննուածներ. Պրակ Ի. 1911, 8°, էջ 431–672։ Գինն՝ 70 կ.։ Արտատպ. «Հոմիա» շարաթաթերթից։ — Առաջին Ա—Դ. պրակները լոյս տեսած են 1909 ին (էջ 1—430), որոնք կը բովանդակէին Ցոմէի Աբգարեան, Դաւիթ եւ Դանիել եւ Նփրեմ կամ ոգեկոնքերու գործունէութիւնը։ Ե. պրակի նիւթն է Ցոհ. Ը. Կարբեցի։

Х. Кучукъ-Іоаннесовъ: Древнія армянскія рукописи изъ Крыма. I. Арм. рукописъ изъ Кафы. 1911, 8°, էջ 11, Արտատպ. ի թերթէն Извѣстій Таврич. Учен. Арх. Ком. Nr. 47. = Հայերէն հին ձեռագիրներ Ղրիմեն. Ա. Հայերէն ձեռագիր մը ի Կաֆա։

(Շարունակելի։) Հ. Մ. ՀԱՊՈՅԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳԵՐ. ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊ. ԳՈՎՐԻԿԵԱՆ ՊԱՏՈՒՈՒԱԾ ԵՐԿԱԹԵՒՑ ԹԱԳԻ ԿԱՐԳԻՆ Բ. ԱՍՏԻՃԱՆԻԼ

Միսիթարեան Աբբաներն ի սկզբանէ անտի վայելած են Աւստրիական-Հունգարական պետութեան բարեացակամ վերաբերութիւնը եւ յաճախ անգամ պատուուած վեհափառ Կայսրներէ այլ եւ այլ շքանշաններով։

Ուրախութեամբ կը փութանք ծանուցանել թէ նաեւ Միաբանութեանս ներկայ Ընդհ. Աբբահայրը Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Գովրիկեան, որ անցեալ Սեպտեմբերին ընդունած էր տասնիւ 50ամեայ քահանայական Ցոբելենին Վիեննայի Քաղաքապետութենէն Ոսկեայ կրկին մեծ Salvator-Medaillen, արժանացաւ կայսերական նոյն բարեացակամ հաւակրանաց։

Ընթացիկ տարւոյս Ցունուար 9ին հաճեցաւ նորին Կայսերական Վեհափառութիւնը՝ Փրանկիսկոս Ցոզէֆ Ա. շնորհել Գեր. Գովրիկեան Աբբահօր Երկրորդ Թագի առաջ. կայսերական դասգի Երկրորդ Աստիճանի շքանշան (österr kaiserl. Orden der eisernen Krone zweiter Klasse) եւ այսու բարձրացնել զինքը Սպասաւորութեան կարգի։

Կայսր. Համակրանաց այս ցոյցը առ նորին Գերապայծառութիւնն եւ առ Միաբանութիւնս կը լնու զմեզ երախտագիտական վառ զգածմամբ, որով կ'աղօթենք միշտ՝ ցանկանալով նորին Վեհափառութեան երկարութիւն կենաց եւ ամենայն յաջողութիւն նորին Կայսերական Թագին։

ՄԽԻԹ. ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ
ՎԻԵՆՆԱ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@